է Ղ. վրդ. Փիրղալէմեան — «Եւ արդ գրեցաւ սա ի սուրբ քաղաքիս Երուսաղէմ, ընդ հովանեաւ Յարութեանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և Գողգոթայի և Սուրբ Յակոբայ, և Յովհաննու Առաքելոյն Քրիստոսի, եւ Սուրբ Սարգսի զօրավարին, եւ Սուրբ Առաքելոցս եւ Հրեշտակապետացս, եւ Սուրբ Քրիկէին, եւ Սուրբ Ծննդեանն, եւ Սուրբ Աստուածածնին, եւ Սուրբ Համբարձմանն եւ Սուրբ Տեառնեղբօր, եւ Սուրբ Լեռնակողմանն, եւ այլ ամենայն Տնօրինականացս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Ի կաթուղիկոսութեան Հայոց Տեառն Կարապետի, եւ յեպիսկոպոսութեան սուրբ քաղաքիս Երուսաղէմայ Տէր Մեսրոպայ եւ Տէր Աբրահամին, և այլ ամենայն միաբանացս Սուրբ Յակոբայ ամէն...։ Յիշեցէք ... զանարհեստ գրիչս զՆերսէս երէցս, եւ զծնողսն իմ ... Յետկար եւ զՄարթայ ...» (Նoswarf Հայոց, էջ 18–19)։ Ինչպէս կը տեսնուի, յիշատակարանիս գրիչը՝ Ներսէս երէց իր «Գանձարանին» ընդօրինակութիւնը կը կատարէ Երուսաղէմի մէջ և կը յիշատակէ իր ժամանակին ազգային ուխտատեղիները, և առանց թուականի կը յիշէ իրեն ժամանակակից Կարապետ կաթողիկոսը եւ Երուսաղէմի հայ եպիսկոպոսները։ Կարապետը՝ Կիլիկիոյ կաթողիկոսն է (1448–1477), որով նոյն ձեռագիրը ընդօրինակուած կ'ըլլայ 1448 էն մինչև 1477 երկարող տարիներուն մէջ, և Յովսափատի Ս. Տեառնեղբօր վանքն ալ իր գոյութիւնը պահած կ'ըլլայ մինչև այդ թուականը։

Ուշադրութեամբ կարդալով վերի յիշատակարանի մէջ յիշուած ուխտատեղիները, կը դիտենք որ նախ եւ առաջ կարգաւ նշանակուած են քաղաքին մէջ գտնուածները, և ապա քաղաքէն դուրս գտնուած «Ս. Քրիքէի, Ս. Ծննդեան, Ս. Աստուածածնին, Ս. Համբարձման և Ս. Տեառնեղբօր և Ս. Լեռնակողման» վանքերը. արդէն իր կարգին յիշատակուած ըլլալով Սիոնի մեր Ս. Յակոբայ վանքը Լեռնակողման վանքէն յառաջ. առանձինն յիշատակուած Ս. Տեառնեղբօր վանքը, պէտք է ընդունիլ թէ՝ Քարուվանքն է Յովսափատու Ս. Յակոբայ վանքը, որ այժմ աւերակ է։

Պատմական այս յիշատակներուն անդրադարձումը յիշել կուտայ մեզ մեր նախնեաց բարեպաշտական ոգին, որ գիտցած է Ս. Տեղեաց յարգը ճանչնալ եւ անոր բազմապիսի շնորհաց վայելքը ըմբռշխնել. նոյն ոգին կրած է նախ մեր Սարգիս Շնոր-